**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

6.2 Մերժել <<ՌԱՖ ՇԻՆ>> ՍՊԸ-ի հայտը՝ հրավերով սահմանված պահանջներին չբավարարելու հիմքով:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

**7. Գնման գործընթացի մասնակցի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու մասին**

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թ փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև որակավորման պահանջի առկայության վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել համապատասխան հարցում:

7.2 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին ենթակետը առաջարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին ուղարկել սույն ընթացակարգի հրավերի II մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

**8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.**

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցից հրավերի II մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից համապատասխան եզրակացությունը ստանալուց հետո՝ հաջորդ աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան ս.թ. հունիսի 13-ը, ժամը 11:00-ը, ք. Երևան, ՀԱԹ Բ-2, Ա.Բաբաջանյան 133/3 հասցեում:

**Գնահատող հանձնաժողով՝**

Կ. Զատիկյան /նախագահ/

Գ. Սաղաթելյան

Ա. Վարդանյան

Ա. Մարգարյան /քարտուղար/